«ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո սկսված բռնությունները և 1921 թ. փետրվարյան ապստամբությունը պառակտեցին հայ հասարակությանը: Սակայն Խորհրդային Հայաստանի նորանշանակ ղեկավարության և հատկապես ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի վարած հանդուրժողական քաղաքականությունը քաղաքական որոշակի կայունության մթնոլորտ ստեղծեց Հայաստանում: Հայ մտավորականությունը ևս որոշեց օգտվել այդ իրավիճակից և իր ներուժն օգտագործել հասունացած գիտական մի շարք հիմնախնդիրներ լուծելու համար: Այսպես, Վ. Տերոյանը, Հ. Հարությունյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Հ. Միրզա-Ավագյանը, Մ. Խոստիկյանը և Խ. Մելիք-Փարսադանյանը որոշում են հիմնել «Հայ փիլիսոփայական ընկերություն» կազմակերպությունը՝ նպատակ ունենալով հայ և օտարազգի փիլիսոփաների գործերը թարգմանել, հրատարակել և ներկայացնել հայ հասարակայնությանը:

1923 թ. հուլիսի 17-ին նրանք պաշտոնապես դիմում են ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ Շ. Ամիրխանյանին՝ խնդրելով հաստատել «Հայ փիլիսոփայական ընկերության» կանոնադրությունը և կազմը: Կարելի է ենթադրել, որ նշված դիմումը մերժվել է, քանի որ Վ. Տերոյանը 1930 թ., որոշ ոչ էական փոփոխություններով, կրկին պատրաստել էր ընկերության կանոնադրությունը, հավանաբար նորից իշխանություններին ներկայացնելու համար*:

Ստորև ներկայացվող փաստաթղթերը տպագրվում են առաջին անգամ՝ ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով, ոճը պահպանելով: Փաստաթղթերը վերնագրել ենք մենք: Բնագրերը պահվում են Հայաստանի ազգային արխիվում (այսուհետև՝ ՀԱԱ):

ՍԱՀԱԿՅԱՆ Ռ. Օ.

N 1

Մի խումբ հայ մտավորականների դիմումը ՀԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Շավարշ Ամիրխանյանին (Ամիրխանովին) «Հայ փիլիսոփայական ընկերության» գրանցման մասին

Հ. Խ. Ս. Հ.
Ընկ. ներքգործժողկոմին[1]

Համաձայն Հ.Ս.Խ.Հ. ժող[ովրդական]կոմ[իսարների]խորհ[րդ]ի 1923 թվի մայիսի 21-ի շահադիտական նպատակ չունեցող ընկերությունների և միությունների հաստատության և տոմարագիտության մասին հրատարակած դեկրետի՝ խնդրում ենք հաստատել և տոմարագրել «Հայ փիլիսոփայական ընկերությունը», որի հիմնադիրներն են.

1. Տերոյան Վարազդատ[2], [հասցեն] Ամիրյան 67
2. Հարությունյան Հակոբ[3], [հասցեն] Ռուբենի 65
3. Մելիք-Օհանջանյան Կարապետ[4], [հասցեն] Աբովյան 102
4. Միրզա-Ավագյան Հարություն[5], [հասցեն] Ամիրյան 35
5. Խոստիկյան Միսակ[6], [հասցեն] Ամիրյան 46
6. Մելիք-Փարսադանյան Խուրշուդ[7], [Նալբանդյան]

Առայժմ որևէ կենտրոնատեղի չունենք, սակայն յուրաքանչյուր հավաքման դեպքում տեղի և ժամանակի մասին կը հայտնենք ուր որ հարկն է:

Ընդ սմին ներկայացնում ենք Ձեզ ընկերությանս կանոնադրության նախագիծը՝ երեք օրինակ:

Հիմնադիրներն են՝ [հետևում են վերը նշված անձանց ստորագրությունները]

1. Վ. Տերոյան
2. Հակոբ Հարությունյան
3. Կ. Մելիք-Օհանջանյան
4. Մ. Խոստիկյան
5. Միրզա-Ավագյան Հարություն
6. [Ստորագրությունը բացակայում է]:
7. Պ. [Ստորագրությունն անընթեռնելի է] [հասցեն] 3-րդ Անանուն N 6, Յերեվան

Յերեվան, 17/VII, 1923 [թվական].

Մակագրված է՝ "Т[оварищу] Костаняну! Испросить мнение Н[ародного комиссариата] прос[вещения]а и чека".

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 12, թ. 76: Բնագիր: Ձեռագիր:

N 2

«Հայ փիլիսոփայական ընկերության» ներկայացրած կանոնադրության նախագիծը

Նախագիծ կանոնադրության Հայ փիլիսոփայական ընկերության

1. Ընկերության նպատակն է փիլիսոփայական գիտությունների և խնդիրների ուսումնասիրությունն ու համապատասխան գրականության զարգացումը հայ լեզվով:

2. Այդ նպատակին հասնելու համար ընկերությունը.

ա. Կազմում է դասախոսություններ, դիսկուսիաներ, զրույցներ և այլն:

բ. Գործող օրենքների սահմանում հրատարակում է գրքեր և թերթեր:

գ. Հատուկ ժամանակ է նվիրում փիլիս[ոփայական] բառարան կազմելուն՝ հայ լեզվով:

դ. Մի կենտրոնատեղում աշխատում է ունենալ փիլիսոփայական գրադարան:

ե. Մեծ փիլիսոփաները թարգմանում է հայերեն:

զ. Հավաքում է հայ փիլիսոփայության վերաբերյալ վավերագրեր և տեղեկագրեր ու արժեքավորները հրատարակում:

է. Կապ է հաստատում այլերկրյա նման ընկերությունների հետ:

ը. Միջոցներ է ձեռք առնելու մի կենտրոնատեղ ունենալու, ուր պահելու է իր արխիվը և գրադարանը:

թ. Կազմում է հայ փիլիսոփայության վերաբերյալ մենագրություններ և ուսումնասիրություններ:

ժ. Աշխատում է միջոցներ ունենալ իր նպատակի իրագործման համար պահանջված ծախքերը հոգալու համար:

3. Ընկերությունը կազմվում է. ա) պատվո, բ) իսկական, գ) համակիր անդամներից:

Իսկական անդամներն ընտրվում են ձայնից բազմությամբ՝ այն թեկնածուներից, որոնք ներկայացնում են տպված կամ անտիպ փիլիսոփ[այական] աշխատություն, հոդված, դասախոսություն, գիրք:

Պատվո անդամն ընտրվում է միաձայն՝ ընկերութ[յան] նպատակներին սատարող անձեր[ից]:

Համակիրներն ընտրվում են ձայնից բազմությամբ՝ քարտուղարի առաջարկած թեկնածուներից:

4. Ընկերութ[յան] գործունեությունը կատարվում է անդամների ընդհանուր ժողովում:

5. Ընդհ[անուր] ժողովի նիստերին մասնակցում են պատվո և իսկական անդամները՝ վճռական, իսկ համակիր անդամները՝ խորհրդակցական ձայնով:

6. Ընկ[երությունն] ունի քարտուղարություն՝ 3 անդամից բաղկացած, որոնք ընտրվում են 1 տարով և հերթով վարում գործերը, յուրաքանչյուրը՝ 4 ամիս:

7. Ընդհ[անուր] ժողովի նիստերի տեղը, ժամանակը, օրակարգը որոշում է հերթ[ական] քարտուղարը և հայտնում անդամներին, ինչպես և պատշաճ [է,] իշխանության[ը]:

8. Նիստերը գումարվելու են առնվազն ամիսը մի անգամ, նախագահ[ությա]մբ հերթ[ական], արձանագրում հերթով հրավիրված մի անդամ: Նիստերը հրապարակային չեն:

9. Յուրաքանչ[յուր] դասախոսություն, ռեֆերատ և այլն, նիստից առաջ գրավոր պիտի հանձնվի քարտուղարին և կարդալուց հետո կցվի արխիվ:

10. Յուրաքանչյուր նիստում, անկախ զբաղմունքի նյութից, ժողովը պիտի զբաղվի առնվազն 2 փիլիսոփ[այական] տերմինի հայացմամբ:

11. Ընդհ[անուր] ժողովը հրահանգ է կազմում յուր քարտուղարության և անդամների զանազան աշխատանքների կարգի և եղանակի մասին:

Յերեվան, 17/VII, 1923 թ.

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 12, թ. 77-78: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ՀԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչակազմակերպչական մասի գրությունը Արտակարգ հանձնաժողովին

N 6435

93 Գաղտնի

Արտակարգ հանձնաժողովին

18 հուլիսի [192]3

Ուղարկելով ընդ սմին Ձեզ կազմակերպվող «Հայ փիլիսոփայական ընկերության» հիմնադիրների դիմումը և կանոնադրության նախագիծը՝ ներքգործժողկոմատը խնդրում է հայտնել Ձեր կարծիքը ըստ էության և մասնակցող անդամների քաղաքական բարեհուսության [մասին]:

Վարչակազմ[ակերպչական] մասի վարիչ (Կոստանյան)

Քարտուղար (Դանիելյան)

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 12, թ. 74: Պատճեն: Մեքենագիր:

N 4

ՀԽՍՀ Ներքին գործերի ժողկոմի գրությունը ՀԽՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին

Լուսժողկոմատին

N 6436

8 հուլիսի 1923

Ուղարկելով ընդ սմին Ձեզ կազմակերպվող «[Հայ] փիլիսոփայական ընկերության» հիմնադիրների դիմումը և կանոնադրության նախագիծը՝ ներքգործժողկոմատը խնդրում է Ձեզ հայտնել Ձեր կարծիքը այս խնդրի շուրջը:

[ՀԽՍՀ] Ներք[ին]գործ[երի]ժող[ովրդական]կոմ[իսար] (Ամիրխանյան)

Վարչակազմ[ակերպչական] բաժնի վարիչ (Կոստանյան)

Քարտուղար (Դանիելյան)

ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 12, թ. 75: Պատճեն: Ձեռագիր:

Ծանոթագրություններ

1. 1923 թ. փետրվարից մինչև 1924 թ մայիսը ՀԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարն էր Շավարշ Ամիրխանյանը (1894-1959 թթ.):

2. Տերոյան Վարազդատ (1887-1938 թթ.) - փիլիսոփա, հասարակագետ, հասարակական-քաղաքական գործիչ: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Վանում: 1909 թ. մեկնել է Փարիզ և ընդունվել Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, որն ավարտել է 1912 թ.: Ուսանել է նաև գերմանական և ավստրիական համալսարանների փիլիսոփայության ֆակուլտետներում:

Սորբոնի համալսարանում ավարտական ատենախոսությունն էր “La biologie d’ Au. Comte” («Օ. Կոնտի կենսաբանությունը), իսկ Բեռլինում փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան ստանալու համար պատրաստել էր “Die Soziologischen Grundlagen der Erkenntnis” («Իմացության սոցիոլոգիական հիմունքները») ատենախոսությունը: Վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմը հնարավորություն չի տալիս պաշտպանել դոկտորական

ատենախոսությունը: 1914 թ. ամռան վերջին վերադառնում է Վան: 1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին մասնակցել է Վանի Այգեստան թաղամասի ինքնապաշտպանությանը: Ընդգրկվել է 1915 թ. մայիսի 7-ին ստեղծված՝ Ա. Մանուկյանի գլխավորած Վանի նահանգապետության կազմում: Վանի հուլիսյան նահանջից հետո տեղափոխվել է Բաքու, որտեղ դասավանդել է հայկական թաղամասում գործող գաղթականական դպրոցում:

1916 թ. մայիսի 10-13 մասնակցել է Պետրոգրադում կայացած Առաջին հայկական համագումարի աշխատանքներին: 1918 թ. վերջին ընտրվել է Թիֆլիսի «Գայանյան օրիորդաց դպրոցի» տնօրեն:

1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում կայացած Արևմտահայ 2-րդ համագումարում ընտրվել է գործադիր կոմիտեի նախագահ:

1919 թ. ծառայության է անցել Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեում (Ամերկոմ), որտեղ տնօրինել է ուսումնական հաստատությունները, որբանոցները և հիվանդանոցները:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ձերբակալվել է չորս անգամ, և բոլոր դեպքերում էլ ներկայացվել են անհիմն մեղադրանքներ: Մահացել է սիբիրյան աքսորավայրում՝ 1938 թ. փետրվարի 6-ին:

3. Հարությունյան Հակոբ (1889-1944 թթ.) - գերմաներենի մասնագետ, փիլիսոփա, գրականագետ, երաժշտագետ: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Խաստուր գյուղում: 1901-1910 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1910-1912 թթ. դասավանդել է Թավրիզի հայկական տարրական դպրոցում:

1912-1919 թթ. սովորել է Բեռլինի, Լայպցիգի և Ցյուրիխի համալսարաններում՝ մասնագիտանալով փիլիսոփայության և երաժշտության մեջ: 1919 թ. ավարտել է Ցյուրիխի համալսարանը և, ստանալով փիլիսոփայության դոկտորի աստիճան, վերադարձել է Հայաստան: Այստեղ դասավանդել է նորաբաց համալսարանում:

1927-1940 թթ. Երևանի պետական համալսարանում դասավանդել է գերմաներեն և եղել է արևմտաեվրոպական լեզուների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար:

1929-1932 թթ. աշխատել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, 1935-1937 թթ.՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղում:

4. Մելիք-Օհանջանյան Կարապետ (1893-1970 թթ.) - հայագետ, Հայկ. ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Ծնվել է Մեղրու շրջանի Կալեր գյուղում: 1903 թ. ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը: 1914 թ. գործուղվել է Գերմանիա՝ արևելագետ Ենսենի մոտ սանսկրիտ ուսումնասիրելու: Արևելագետ և հայագետ Յոզեֆ Մարկվարտի միջնորդությամբ ընդունվում է Բեռլինի համալսարան՝ որպես ազատ ունկնդիր: Հմտանում է գերմաներեն, հին իրանական, հին հունական լեզուների, գրականության, մշակույթի և այլնի մեջ: 1920 թ. վերադառնում է Հայաստան: 1922-1925 թթ. դասավանդել է Երևանի պետական համալսարանում: 1930-1937 թթ. եղել է Հայաստանի գիտությունների ինստիտուտի, ապա՝ նյութական կուլտուրայի պատմության, կուլտուրայի պատմության, գրականության և պատմության ինստիտուտների

գիտական քարտուղարը, հայ հին գրականության ու ժողովրդական բանահյուսության բաժինների վարիչ:

5. Միրզա-Ավագյան Հարություն (1879-1938 թթ.) հայ վիրաբույժ, պրոֆեսոր, Հայաստանում ժամանակակից վիրաբուժության հիմնադիրներից: Ծնվել է Բաքվում: 1900 թ. ավարտել է Բաքվի արական գիմնազիան: Սովորել է Կիևի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, երկու տարի անց փոխադրվել է նույն համալսարանի բժշկական ֆակուլտետը, որն ավարտել է 1908 թ.:

1909 թ. աշխատել է Կիևի քաղաքային հիվանդանոցում՝ որպես վիրաբույժ, իսկ 1915 թվականից՝ Համառուսաստանյան քաղաքների միության Կիևի N 1 հոսպիտալում՝ որպես ավագ վիրաբույժ, ապա վիրաբուժական բաժանմունքի վարիչն էր:

1919 թ. վերադարձել է Հայաստան: Գլխավորել է Երևանի կայազորի զինվորական հոսպիտալի վիրաբուժական բաժանմունքը:

1924 թ. դասավանդել է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1928 թ. գլխավորել է համալսարանի անատոմիայի և վիրաբուժության ամբիոնը, 1930 թ.՝ N 2 վիրաբուժական ամբիոնի, 1933 թ.՝ հոսպիտալային վիրաբուժության ամբիոնի վարիչ:

Հ. Միրզա-Ավագյանն իր գործընկերների հետ հրաժարվել է վկայել ՀԽՍՀ ԿԿ-ի առաջին քարտուղար Ա. Խանջյանի «ինքնասպանությունը»: Խորհրդային իշխանությունների կողմից մեղադրվել է «ազգայնամոլության» մեջ և ձերբակալվել: Մահացել է Երևանի քաղաքային բանտում:

6. Խոստիկյան Միսաք (1881-1938 թթ.) - փիլիսոփա, մանկավարժ: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Վանում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի միջնորդությամբ ուսումը շարունակել է Շվեյցարիայում: Դավիթ Անհաղթի ժառանգության առաջին ուսումնասիրողներից է: 1907 թ. Գերմանիայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը» թեմայով: 1908 թ. դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան դպրոցներում: Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո դասավանդել է Երևանի պետական համալսարանում և այլ բուհերում: Անհիմն բռնադատվել է, հետագայում՝ արդարացվել:

7. Մելիք-Փարսադանյան Խուրշուդ (1885-1958 թթ.)՝ նախնական կրթությունը ստացել է ծննդավայրում՝ Կապանի Բեխ գյուղում: 1896-1905 թթ. սովորել է Շուշիի ռեալական գիմնազիայում: 1906-1907 թթ. ուսանել է Ենայի (Գերմանիա) համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, իսկ 1907- 1911 թթ.՝ Բեռլինի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1911 թ. պաշտպանել է ավարտաճառ և ստացել բժշկական գիտությունների դոկտորի աստիճան:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում՝ որպես Կովկասյան 3-րդ հրաձգային դիվիզիայի բժիշկ: 1918 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին Բաքվում եղել է 3-րդ հեղափոխական բրիգադի բժիշկը: 1920 թ. ծառայել է 11-րդ կարմիր բանակում, իսկ 1922 թ. տեղափոխվել է Երևան, որտեղ աշխատել է տարբեր հիվանդանոցներում: 1932 թ. դասավանդել է Երևանի բժշկական ինստիտուտում: